ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«10» ապրիլի 2017 թվականի № 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ «ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչությունում կատարված կառուցվածքային փոփոխությունները.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի հունվարի 24-ի «ստուգում անցկացնելու մասին» թիվ 200001 հանձնարարագրում՝
   1) «էներգետիկայի» բառը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների» բառերով.
   2) «մարկշեյդերական վերահսկողության բաժնի պետ – ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ Հակոբ Պետրոսյանին, իրավաբանական, հաշվետվությունների ընդունման և վերլուծության բաժնի պետ – ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ Հովհաննես Մալխասյանին» բառերը փոխարինել «Իրավաբանական, հաշվետվությունների ընդունման և վերլուծության բաժնի պետ – ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ Հովհաննես Մալխասյանին,

երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ- ընդերքի հանրապետական պետական տեսուչ Հակոբ Պետրոսյանին» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի հունվարի 24-ի «ստուգում անցկացնելու մասին» թիվ 200002 հանձնարարագրում՝
   1) «Էներգետիկայի» բառը փոխարինել «Էներգետիկ ենթակառուցվածքների» բառերով.
   2) «մարկշեյդերական վերահսկողության բաժնի պետ – ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ Հակոբ Պետրոսյանին, իրավաբանական, հաշվետվությունների ընդունման և վերլուծության բաժնի պետ – ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ Հովհաննես Մալխասյանին» բառերը փոխարինել «Իրավաբանական, հաշվետվությունների ընդունման և վերլուծության բաժնի պետ – ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ Հովհաննես Մալխասյանին, երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ- ընդերքի հանրապետական պետական տեսուչ Հակոբ Պետրոսյանին» բառերով:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ